

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Զայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Զայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԵԿՈՂ 1888 ԹԻԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն գիրքով և նոյն պրոգրամայով: Մենք կը ստանանք սեփական
ՀԵՌՈՒՄԻՆԻՆԵՐ:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարեկանը 6 ռուբլ:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՍՐԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների ան-
կիւնում, Թամարիայի տանը):

Կայսերական ուրիշ թղթերից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է գիմել հետեւեալ հաս-
ցէով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Առաջիկայ տարվայ «ՄՇԱԿ» պրոգրամը նոյնը կը լինի, այսինքն I. Առաջնորդող յօդուած-
ներ. II. Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընդհանուր յօդուածներ (հասարակական, դատաստանական, տնտե-
սական և այլն) Թղթակցութիւններ, լուրեր. III. Կառավարական կարգադրութիւններ. IV. ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընդհանուր յօդուածներ, Թղթակցութիւններ, լուրեր. V. ԽԱՌՆ. ԼՈՒԻՍԵ. VI. ՀԵՌՈՒՄ-
ԳԻՐՆԵՐ և ԲՈՐՈՍ. VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ֆելիետոններ, ճանապարհորդութիւններ, աղագրական,
ուսումնական յօդուածներ, վէպեր և այլն. VIII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Զայտարարութիւններ ընդունվում են ամեն լեզուներով: Վճարը՝ բառին 2 կոպէկ: Տասն անդա-
մից աւելի տպվող զայտարարութեան համար նշանաւոր գիրքով կը լինի:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Էթանագին հուշակ. Ար-
հեստագիտական դպրոցի անհրաժեշտութիւնը Ա-
լեքսանդրոպոլում. Անդրկովկասի հայ-կաթոլիկներ-
ըն հարցը. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Ֆրանսիական հանրապետութեան նախա-
դաս. Նամակ Ամերիկայից. Արտաքին լուրեր.—
ՀԵՌՈՒՄԻՆԵՐ.—ԲՈՐՈՍ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պատկերներ Վասպուրա-
կանի հայոց կեանքից.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Էթանագին Հուշակ

Մի այնպիսի կիսակիրթ ազգի մէջ, ինչպիսին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՎԱՍՊԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՅՈՑ ԿԵՆՔԻՑ

(Իմ իշխողութիւններով)

Ուրեմն ես գտայ ինքզինքս կատարելապէս Ե-
դիչի դարում: Դարականը երկար շարունակվե-
ցաւ նոյն անկողնի և սուրբ ներդաշնակութեամբ
Մանկիկները խառնում էին նորա մէջ իրանց մը-
տաքսանի ու անկապ վանկերը, բայց բոլորը՝ ծիւր
և մանուկ, երիտասարդ ու հասակաւոր, մինչև
իսկ նա ինքն՝ այն պաղ ու կրօնատեսայ բանա-
ստեղծ պ. Պետրոսը.—բոլորը, բոլորը, ասում էին,
կամայ թէ անկամայ, լեցված էին նոյն և մի մա-
քուր ու վեհ զգացմունքով, յար և նման պատմա-
բանի վկայութեան, թէ «Առհասարակ դմի դի-
նոստրութիւն զինուորացեան և զմի ազան զրահս
հաւատոյ պատուիրանին ֆրիստոսի. միով գոտեալ
ճշմարտութեան պնդեցին զմէջս արք և կա-
նաք»:

Եւ պէտք է ասած, որ կանայք անմաս չէին
այդ զինուորականից: Չթշննց պէս նահապե-
տական տան մէջ նոյն առանձին են աղօթում,
բայց ուրիշ տեղեր նրանք էլ են միանում այրե-
րին:

—«Առաջի պատուական ամենայաղթ...»—ա-
սում է աղաներից մէկը Դարականից յետոյ:

—«Հայր մեր որ յերկինս...»—լսվում է վեր-
ջը Ստեփան աղայի ձայնը և անգամ տեղուական

մեր ազգն է, ամենաբարձր և ամենամեծ տիւ-
ղոսները և հուշակը ձեռք է բերվում շատ հեշտ
կերպով: Բաւական է միայն մի քանի լուրերի
չարտել այս կամ այն հասարակական հիմնարկու-
թեան, այս կամ այն կարօտեալի վրա, և ահա
ամեն կողմից սկսում են առատութեամբ տեղալ
բարերար հայրենասաց, աղգասէր, բարեգործ և
նոյն իսկ հայրենասէր տիւղոսները: Մեր կիսա-
կիրթ հասարակութեան մէջ ամեն մի հարուստ,
ամեն մի մարդ, որ քիչ շատ փող ունի, կարողա-
նում է շատ հեշտութեամբ այնպիսի հուշակ և անուն
ստանալ, որպիսին կը թված ազգերի մէջ ձեռք է
բերվում անկեղծ անձնութեամբ, հասարակա-
կան տոկոսն զօրծնունդութեամբ և ինկելի անձ-
նազօրութեամբ: Ներքինի կրեցէք, ընթերցող
մի փոքր ուշադրութեամբ դիտելու ձեր չորս

աղօթքին կցելով նաև ըստանալական չերթաք
խաղաղութեամբ և Տէր Զիսուս ֆրիստոս եղիցի
ընդ ձեռք և ընդ ամենեւին, ամէն՝ մաղթանքը
—խորին յարգանքը մօտենում ենք ամենքս համ-
բուրելու այդ «ժամ արձակողի»-ի թոռնած
ձեռքը և բարի գիշեր մաղթելով՝ ցրվում ենք սե-
նեակից...

Կրօնասիրութիւնը չարամարտող ընթերցողնե-
րին առաջարկում եմ աչքի անցնել յիշեալ ա-
ղօթքները ամբողջութեամբ մեր «Ճամագրե-
րում»... Դրանով նրանք կարող են փոքր ի շատէ
զաղափար կազմել Չրթչննց տան հանապազօրեայ
բարեպաշտական հանգէսի վրա: Ասում եմ «Փոքր
ի շատէ», քանի որ աղօթքի հողին ոչ թէ չոր
ու ցամաք ընթերցման, այլ սրտաբուրի արտա-
սանութեան մէջ է կայանում: Չր մոռանանք նաև
աւելացնել, որ մեծ պատի օրերին յիշեալ աղօթք-
ների թիւը կրկնապատկւում է և քանի մի չարա-
կան էլ աւելանում մեր վասպուրականցիների
գէթ մի քանի հին տներին ընտանեկան-կրօնական
հանդէսներում: Այն ժամանակ արարողութիւնը
տեւում է մօտ 2 ժամ և այդ ամեն երեկոյ...

Բ.

Մեր դուրս գալուց յետոյ մեր սիրելի հաշիւ
մնում է մենակ: Դրացի սենեակից տան մանկա-
մարդ հարմիրը բերում են նրա անկողինը և նա
մտնելով այդ նախապատրաստական դերձմանը,
քնում է իր անմեղ և անվրդով քնով:

Աղաները իրանց տղաներով բարձրանում են
չինութեան վերին մասերը, իրանց յատուկ բնա-
կարանները: Նրանց կանաչը նոյնպէս, դուրս ե-
լած տան-տնից օրօրոցներով ու ծծկեր մանուկնե-
րով սպասում են նշմարանում իրանց «աղանե-
րին»: Քաւորը ժամից յետոյ ամբողջ տունը մը-
րափում է արդէն խոր քնի մէջ:

Պ. Պետրոսի հետ բարձրանում ենք իր առանձ-

նակը, և դուք կը գտնէք հաղաբարտ փաստեր,
որոնք հաստատում են մեր ասածը: Փողով, այդ,
միմիայն փողով մեր հարուստներից իւրաքանչիւ-
րը ժառանգել է և կարողանում է ժառանգել
հասարակաց բարերարի, աղգասէրի և բարեգործի
վեհ անունը: Տեսէք, ահա ամեն կողմից աղգասէր
են անուանում մի քանի տանեակ հաղար ունե-
ցող խանութպանին, վաշխառուին, կամ կապա-
լառուին, որը բարեհաճել է մի քանի տանեակ
բուրի նուրիւն այս ինչ գիւղի կամ քաղաքի
խղճով հայոց դպրոցին: Նայեցէ՛ք թէ ինչպէս
հրապարակաւ աղգի բարերար և բարեգործ անունն
է ստանում գաւառական քաղաքում այս կամ
այն հարուստը, որ քաղութիւն է ունեցել մի
հարիւր լուրի նուիրելու այս կամ այն ընկերու-
թեանը, կամ որը մի յիսուն բուրի ճանապարհա-
ծախս է տուել մի որ և է աղքատ ուսանողի, և
կամ վերանորոգել է եկեղեցու խալիսով զանգա-
կատունը: «Ո՛հ, երանի թէ մեր աղգի մէջ անպա-
կաս լինէին այդ տեսակ օրինակելի բարեպաշտ և
հայրենասէր անձինքը» գոչում, գոչում են ամեն
կողմից, յայտարարելով ի գիտութիւն աղգի,
որ այս ինչ աղան, կամ այն ինչ միլիոնատէր
վաճառականը նուիրել է մի որ և է հասարակա-
կան նպատակի համար մի քանի հարիւր բուրի:
Եւ այդպէս, որ կողմից որ մի քանի կոպէկ է դուրս
գալիս, դէպի այն կողմն է հոսում աղգասէր,
հայրենասէր և բարեգործ անունների առատ
հոսանքը... Բայց ո՛վքեր են, ինչ մարդիկ են այդ
մարդիկ, որոնք փողով, շատ չնչին գումարներով
կարողանում են այդպիսի մեծ անուն ժառանգել:
Այժմ յիշում եմ իմ զրանց կեանքը և գործերը արժանի
են այդ տեսակ հուշակի: Միթէ ճշմարիտ, բարե-
գործ է այն մարդը, որ իր ամբողջ կեանքում
սրան նրան զրգելով, սրան նրան զրկելով և
թշուառացնելով և հաղար ու մէկ անարդար ճա-
նապարհորդ հարստութիւն զրկելով մի քանի
տանեակ բուրի է նուիրում այս կամ այն հիմ-
նարկութեանը՝ բարեգործ անունը ստանալու հա-
մար:—Երբեք: Միթէ յիշում եմ աղգասէր է այն
մարդը, որ որբերի փողեր ուտելով, 50—80 տո-

նասնեակով: Մենք դեռ մի երկու ժամ էլ կարող
ենք աղատ խօսակցել:

—Սամուր կուզեմ դնել,—հարցնում է նա
ինձ:

—Դնեմք:

—Բայց այս գիշեր դու պէտք է այստեղ մնաս,
նոր ոտանաւորներ եմ դրել, կարդանք:

—Լաւ կը լինի,—համաձայնում եմ ես:
Գցում ենք միմիայն սամուրը և նորից մըտ-
նում սենեակ:

Իբրեւ շնոր սերնդի ներկայացուցիչ, պ. Պետ-
րոսը ունի աթոռներ, զրաւեղան և քանի մի կը-
տոր գիրք, որոնց մի մասը ուղարկել էր Պօլսից
իր ողբացեալ կարապետ եղբայրը, իսկ մնացածը
հաւաքված էր զանազան անձերից կարդալու հա-
մար:

Նա կարդում է իր «երգերը»—ինչպէս ինքը
սովորութիւն ունէր ասել—ոտից ցզուրկ յափշ-
տակված: Իր արտօնութեամբ և ընդհատում եմ
երբեմն նրա ընթերցանութիւնը և անում թիթի
գիտողութիւններ: Ասում եմ «թիթի», որովհետեւ
նա չէ սիրում «ճանր» տեսակիտից: Կարդալուց
յետոյ նա մտնում է նոցա մէջ ինչ ինչ փոփո-
խութիւնների, համաձայն յայտնված նկատողու-
թիւնների:

Նրա «երգերից» մէկը սկսվում էր այսպէս.

«Ա՛խ, երանի այն օրին,

նրա և յանկարծ արթնցած,

Առաւօտեան զեփուռով

Խաչ-ղբօ տեսնեմ ծածանուած»:

Բայց նա շարունակվում ու վերջանում էր ա-
ւելի մեծ ու վեհ իդէալով: Նրա հայրենասիրական
երգերը շատ նման էին իրար և գրեթէ ամեն մի
երգի ընթերցումից յետոյ միշտ գալիս էին նա այն
եղրակացութեան, թէ մեր բանաստեղծը ուզում
է, որ ամեն ինչ իր քնած ժամանակ կատարվի:

Կոտով փողեր տալով, զրկելով տան մէջ եղբորը,
խանութում գործակատարին, փողոցում արհես-
տաւորին, գիւղերում երկրագործին՝ փողեր է դի-
ղում, և իր հարիւր հաղաքներից մի քանի բուր-
ի եկեղեցուն է տալիս, մի քանի բուրի զարդի
վրա է շարաւում, և մի քանի բուրի էլ հասա-
րակական հանգանակութեան նուիրելով ինքնագոհ
կերպով ժպտում է, երբ իր ականջին հասնում են
ստորաքաղաք մարդոց բերանից բղխած «աղգասէր»
բառերը:—Ո՛չ մի ժամանակ էլ բարոյապէս ճի-
քան անկիրթ պէտք է լինի մի հասարակութիւն,
որ փողով վաճառի այնպիսի տիւղոսները և ա-
նունները, որոնք իսկապէս միմիայն անձնութիւն-
ութեամբ և անձնագործութեամբ պէտք է ձեռք բեր-
վեն, որոնց համեմուտ համար մարդիկ պէտք է
սովորեն ամեն տեսակ ներդրումներ կրել, ո-
րոնց արժանանալու համար մարդիկ պէտք է չը
ինչպէս ոչ թէ միայն իրանց հարստութիւնը,
ուրախութիւնները և վայելչութիւնները, այլ և
նոյն իսկ իրանց ամբողջ կեանքը: Թող հաղար
ու մէկ կեղտոտ ճանապարհներով հաղարներ
զրկած հարուստ վայելի կեանքի բաղադրութիւն-
ները, թող նա ուտի, խմի և քէֆ քաշի իր ճոխ
ապարանքի մէջ, թող նա հրամայէ իր բաղադրիւ
արքանեակներին և ստորադրեալներին, թող նա
իր փողով անի ինչ որ կամենում է, բայց թող
նրա հետ միասին նա չը կարծի թէ փողով կարե-
լի է առնել հայրենասէր, աղգի բարերար, աղգա-
սէր և բարեգործ տիւղոսները, ինչպէս որ փողով
առնում են անպատասխան կնոյ պատեր, մար թէ
հոյակապ ապարանքներ և փողապաշտ մարդոց
չողոցորթութիւնները: Ինքնահամաշտութեան դի-
մող հասարակութեան մէջ ամեն մի մարդ պէտք
հասկանայ, որ կայ մի բարոյական աշխարհ, որի
սահմաններին չէ կարելի մօտենալ ոչ փողով և
ոչ էլ մի ուրիշ տեսակ որ և իցէ ոյժով այլ որին
մօտենալու համար պէտք է յանձն առնել ամեն
տեսակ զրկանք և ներդրում: Այդ գաղափարը
պէտք է աճի և զարգանայ ամեն մի հասարակու-
թեան մէջ, որպէս զի դրա հետ միասին առաջ
դան ճշմարիտ աղգասէրներ, հասարակական դո-

ցեայ երգում էինք, թէ էինք խմում ու խօ-
սում, ճեմելով սենեակի մէջ:

—Հաջի աղան ծանօթ է քո երգերին,—հարցրի
ես մի անգամ:

—Ա՛խ... մարդ դուրս գու էլ: «Աղգադն ինչ
գիտեմ, թէ մարգարիտ ինչ կորապէս է» *): Հա-
ջի աղային պէտք է Դարական տալ որ կարդայ:
—Հա իրաւ,—հարցրի ես մի օրպէսական լուռ-
թիւնից յետոյ—դու ինչու աղքատ կծու դիտո-
ղութիւններ ես անում հաջի աղային:

—Պէտք է նրա փութալ գաղափարները ջարդել:

—Բայց դու կը յուսան, որ նա իր ութսուն

տարեկան գաղափարները թողնէ: Դու պէտք դառ-
նացես իդուր նրա վերջին օրերը և ուրիշ ո-
չինչ: Եւ միթէ, ճշմարիտ, դու այդքան վիպասա-
կար ես հասարակութեանը, որ անպատասխան
ես մի մտերմական փաղաքշանքով, որպէս զի
շատ չը զրգուիս խօսակցիս:

—Դու կերելի չես գիտեր, որ հաջի աղան մեր
տունը կը քանդէ իր այդ կրօնասիրութեամբ...

—Իրաւ, բացականցեցի ես զարմացմամբ:

—Հապա ինչ կը կարծես... Ամիսը երկու ոսկի
փարայ կը տանք իրեն... և ինչ կը կարծես, ինչ
կանի էլ փարաները:

—Ի՛նչ կանի:

—Բռնել է թաղի մէջ չորս-հինգ մարդու ամ-
սական է կապիւ: Մէկը որպէս թէ վարձապետ է,
տասը տղայ ունենալու համար չէ կարող չա-
հուիլ... Միւսը ծիւր քահանայ է, «պարտքեր ու-
նի», երբորդը այրի կին է, չորրորդը կոյր է,
հինգերորդը՝ չեմ գիտեր ինչ ջանամ է...

(Կը շարունակվի)

*) «Կորապէս»-ը վանեցիների լեզուով իսկապէս
ասել է ժանգոտված և անպէտք երկաթի կտոր,
բայց մեծ մասամբ նրանք այդ բառը գործ են
դնում մեր «զարմանալի» մտքով:

ծինքն և բարեգործներ. ապա թէ ոչ կը պատահէր այն, ինչ որ այսօր պատահում է մեր ազգի մէջ, ուր թէև ազգայնականներ և բարեգործներ թիւը համարեա նոյնքան է, որքան հայ կայ աշխարհիս երեսին, բայց ուր ուրախալի երևոյթներ համարեա թէ չը կան իւ հարցնող լինի, թէ ինչ արեցին այդ մեծահռչակ ազգայնականները և բարեգործները: Ինչ արեցին այդ տխուրագոյնները, երբ մինչև այժմ էլ մեր դպրոցները աղքատ են, ընկերութիւնները փող չունեն, և հրկիզեալներն ու սովաւանջներն համար էլ կօպէկներով են ուղարկուել հաւաքուած Հասարակութիւնը ոչինչ չօգտփելի օգուտ այդ տեսակ էփանագին ազգա-սիրութիւնից և բարեգործութիւնից չէ ունեցել և երբեք էլ չի ունենալ: Դաւանալ է, որ զէթ սրա-նից յետոյ մեր հասարակութիւնը ճանաչէր զհա-հատել ճշմարիտ ազգասիրութիւնը և բարեգոր-ծութիւնը, թոյլ չը տալով որ բաղդախնդրութեան առարկայ և խաղալիք դառնար այն, ինչ որ այն-քան բարձր և այնքան դժուար մատչելի է եղել դարերի ընթացքում ամբողջ մարդկութեան մէջ:

Խ. Մ.

ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԳՊՈՐՈՅԻ ԱՆՀՐԱՍԵՇՏՈՒԹԻՒՆԸ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈԼՈՒՄ

Ուրախութեամբ կարգադրելով լրագրութեան մէջ այն ցանկայի լուրը, թէ կովկասի պ. կառավարչա-պետի կարգադրութեամբ, մօտ ժամանակներումս պէտք է բացօթի Անդրկովկասի իւրաքանչիւր նա-հանգի մէջ մի արհեստագիտական դպրոց, և թէ կառավարութիւնը այդ նպատակի համար արդէն նշանակել է տարեկան ծախք 5000 ռուբլի:

Անհամբերութեամբ սպասելով այդ օգտաւէտ նպատակի իրագործմանը, անկարելի է չը խօս-տովանվել, որ այդ արհեստագիտական դպրոցնե-րի գոյութիւնը մեր երկրի և ժողովրդի համար կատարեալ բաղդաւորութիւն պէտք է համարել, եթէ դպրոցները կարող լինեն ծառայել որչա՛ն նը-պատակի, ի նկատի առնելով մեր երկրի տնտե-սական ընդհանուր վիճակը և ժողովրդի դարգա-ման միակողմանի ուղղութիւնը ընդհանրապէս թէ՛ իրաւիս ջերմ համակրութեամբ պէտք է ընդունվի կառավարութեան այդ կարգադրութիւնը ժողով-րդի կողմից, այժմանից իսկ կարելի է գուշա-կել, աչքի առաջ ունենալով Անդրկովկասի ժողո-վրդի մէջ արծարծվող միտքը դէպի արհեստնե-րի դարգաւորումը, որը հետեանք է անշուշտ թէ ներկայ տնտեսական ճգնաժամով, և թէ բաւական ժամանակից հետէ մեր լրագրութեան մէջ յարու-ցած տնտեսական, և ներքին արդիւնաբերութեան խնդրի՝ որի տարածման համար այնքան աշ-խատում է «Մշակը»:

Այժմանից անկարելի է նախատեսել թէ կա-ռավարութիւնը այդ արհեստագիտական ապագայ դպրոցները որ բաղդաւորում պէտք է հաստատէ և ինչ արհեստագիտական ճիւղերով, միայն լրա-գրութեան միջոցով համարձակվում ենք հարց բարձրացնելու Ալեքսանդրօպօլի քաղաքի օգտին, որի տնտեսական վիճակը արհեստագիտական դպրոցի կարիքը վաղուց զգում է: Պէտք է յու-սալ, որ մեր քաղաքացիները ուշադրութեան կառ-նեն այս խնդիրը և մեր արհեստաւոր դասակարգի ներկայ տխուր վիճակը, և կաշխատեն օգտվել կառավարութեան ներկայ կարգադրութիւնից: Բաւական է, որ մեր քաղաքացիք մի հասարակական ժողով կազմելով, խնդրել ներկայացնեն կառա-վարութեանը Ալեքսանդրօպօլում այդ արհեստա-գիտական դպրոցի հաստատութեան համար, նկարագրելով Ալեքսանդրօպօլի ներկայ տնտե-սական վիճակը, և այն բազմաթիւ կենսա-կան պայմանները, որ ունի Ալեքսանդրօ-պօլը համեմատելով մեր մնացեալ ուրիշ դաւա-ռական քաղաքների հետ, և որի համար մի ար-հեստագիտական դպրոց ունենալը անհրաժեշտ պահանջ, և անյետաձգելի խնդիր է ներկայումս: Իսկ թէ քաղաքը իր կողմից ինչ միջոցներով կա-րող է օժանդակել յիշեալ նպատակի իրագործվե-լուն, այդ շատ հեշտութեամբ կարելի է քննու-թեան ենթարկել, եթէ միայն քաղաքի ղեկավա-րող մասը մի հասարակական ժողովով հաստատա-պէս համոզվելու լինի, որ այդպիսի մի դպրոց ու-նենալը անհրաժեշտ է մեր քաղաքի մեծամասնու-թեան համար:

Հաստատապէս համոզված ենք, որ Ալեքսան-դրօպօլի հասարակութիւնը եթէ յարմար առիթից օգուտ քաղելու արամադրութիւնը չունենայ, շատ

բան կորցրած կը լինի մօտիկ ապագայում, ինչ-պէս մեր շատ հասարակական խնդիրները, որոնք մոռացութեան տրվելով, մնասկ են հասարակաց շահերին: Բայց մենք հաստատապէս համոզված ենք, որ Ալեքսանդրօպօլի հասարակութիւնը այն-քան պարտաճանաչ կը լինի, որ յարգելով ընդ-հանուր հասարակաց շահերը, որքան կարելի է շուտ կաշխատի խնդիր ներկայացնել կառավա-րութեանը, որի հաճութեան համար բոլորովին կատարած չը կայ մեր կողմից:

Անօրուտ չի լինի, ի հարկէ, որ լրագրութիւնը էլ լուրջ ուշադրութեան առնէ այդ հասարակաց շատ օգտաւէտ խնդիրը, իսկ գաւառական թըղ-թակցիների պարտականութիւնն է արծարծել այդ խնդիրը հասարակութեան մէջ, նկարագրելով ամեն մի քաղաքի ժողովրդի պէտքերը, որոնք անմիջական կապ ունեն այդ տնտեսական խնդ-րի հետ: Հէնց այդ նպատակով մենք կաշխա-տենք մի երկու յօդուածով աւելի մօտիկից ծա-նօթացնել հասարակութիւնը Ալեքսանդրօպօլի արե-տեսական և մտաւոր դրութեան հետ, աւելի շո-շափելի կացութեանը համար, որ արհեստագի-տական դպրոցի հիմնարկութիւնը անհրաժեշտ մի խնդիր է մեր քաղաքի համար:

Պ. Բէքուրեան

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՀԱՅ-ԿԱԹՈՒԼԻԿՆԵՐԻ ՀԱՐՅՈՐ

Ինչպէս յայտնի է, Անդրկովկասի հայ-կաթօլիկ-ները, որոնք թուով 40 հազարի են համեմատ այժմ, երկար տարինեւ լրագրութեան էին լատին կղերական-ների ապօրինի վարածներին և ճնշումներին դէմ թէ թէ կառավարութեան առաջ, թէ տեղական մամու-լի միջոցով, յայտնելով իրանց փափաքը, որ Անդր-կովկասում հաստատվի մի հայ-կաթօլիկ եպիսկո-պոս այդ քառասուն հազար ժողովուրդը կառա-վարելու համար, որոնք դեռ մինչև այժմ գտն-վում են Սարատովի ժամանակաւոր լատին եպի-սկոպոսի իրաւասութեան ներքոյ, իսկ Սարատովի լատին եպիսկոպոսը իր իշխանութիւնը տարածե-լով Սամարայի, Սարատովի, Եկատերինսկայի, Աստրախանի նահանգների և Բեսարաբիայի վրա, որոնք իրանց մէջ ընդամենը կան 150 եկեղեցի 200 հազար ժողովուրդով, քնակաւաբար անկարող է հաղաւոր դիմադրել հեղաւորութիւնից կանտ-նաւոր կերպով կառավարել նաև Անդրկովկասի եկեղեցին 40 հազար հայ-կաթօլիկ ժողովուրդի: Բացի դրանից հայ-կաթօլիկներին կհրճւի մասամբ տարրեր լինելով լատին կղերից, անպարմար է, որ քառասուն հազար հայ-կաթօլիկ ժողովուրդը ի-րանց եկեղեցիներով և քահանաներով միշտ զբա-սկան լատին եպիսկոպոսի իշխանութեան տակ: Անդրկովկասեան հայ-կաթօլիկները, բացի այն, որ թիֆլիսում ունենան հայ-կաթօլիկ եպիսկոպոս, անհրաժեշտ էին համարում, հէնց թիֆլիսում ու-նենալ նաև հայ-կաթօլիկ հոգևոր կօնսիստօրիա և հոգևոր սեմինարիա, որտեղ աւարտողները կարո-ղ զանալին փոխարինել դաւաճեալում ցրված իրանց պաշտօնին անհամապատասխան, տղէտ հայ-կա-թօլիկ քահանաներին: Բայց ահա այսօր թիֆլիսի լատինականները իմանում են, որ վերջապէս, հայ-կաթօլիկները արդարացի խնդրքը ներկա-յացած է կառավարութեանը, իմանում են, որ նրանք խնդրում են կառավարութեանը հաստա-տել թիֆլիսում հայ-կաթօլիկ եպիսկոպոս և հիմ-նել հայ-կաթօլիկ հոգևոր սեմինարիա, իմա-վերադարձնել իրանց՝ Միջին-փողոցում գտն-վող հայ-կաթօլիկների պապերի քրտինքով շին ված ս. Աստուածածնի եկեղեցին, որը իրանց են սեփականացրել լատինականները: Եւ այս բոլորը նրանց զրդում է դիմել հետեալ ան-հիմն և զրդուչ միջոցներով. —նրանք այժմ հաւա-տացնում են ժողովրդին, որ իբրև թէ ս. Աս-տուածածնի եկեղեցին պէտք է յանձնվի ոչ թէ հայ-կաթօլիկներին, այլ հայ-լուսաւորչա-կանն երին, և հրաւիրում են ամբողջ համայն-քին դիմադրել այդ կարգադրութեան, իսկ միա-միտ ժողովուրդը կարծելով որ իրաւ հայ-լուսա-ւորչականները պէտք է իրանցից խլեն եկեղեցին, բոլորովին է և սկսում է իրար տեղը թշնա-մանալ իրանց լուսաւորչական եղբայրների հետ: Բայց այդ բաւական չը համարելով, թիֆլիսի մի քանի լատինականները այսօր մի թուղթ են շինել և հայ-կաթօլիկներից միամիտներին հրաւիրում են իրանց մօտ և համոզում, որ այդ թուղթը ըս-տորաբան, յայտնելով որ իբր թէ դա մի բողոք

է այն կարգադրութեան, որով պէտք է յիշեալ կաթօլիկ եկեղեցին յանձնվի հայ-լուսաւորչական-ներին: Արդեօք չեն մեղանշում իրանց խղճի և կոչման դէմ լատինականները իզուր տեղը կո-րայրը եղբոր դէմ զրգուելով, և նրանց միմեանց հետ թշնամացնելով: Եւ միթէ նոքա այնքան պարզամիտ են, որ մինչև այսօր չը կարո-ղացան հասկանալ, որ թիֆլիսում հայ-կաթօլիկ եպիսկոպոսական աթոռ և հայ-կաթօլիկ հոգևոր սեմինարիա ունենալ փափագում են ոչ թէ միայն թիֆլիսի հայ-կաթօլիկները, այլ դա ի վաղուց ցանկանում են Ախալցխայի, Ալեքսանդրօպօլի, Արդուինի, և ամբողջ Անդրկովկասի հայ-կաթօլիկ-ները: Եւ ինչ արդիւնք պէտք է ունենայ 40 հա-զար ժողովրդի դէմ մի հարկու հոգու ստորագրու-թեամբ կազմված կեղծ խնդրագրից: Ամեն ոք դիտէ, որ հայ-լուսաւորչականները ոչ թէ ջանում են հայ-կաթօլիկների եկեղեցին խլելու, այլ նը-րանք սեփական եկեղեցիներն էլ սակաւ են այ-ցելում, և թիֆլիսում 24 եկեղեցի ունենալով, առ այժմ ուրիշ եկեղեցու բոլորովին հարկաւորու-թիւն չունեն: Հայ-լուսաւորչականները դեռ մինչև այժմ թիֆլիսի հայ-կաթօլիկներից ոչ մի պահանջ չեն ունեցել և չեն էլ կարող ունենալ: Եւ նրանց ինչ հարկաւոր է ս. Աստուածածնի հայ-կաթօլիկ-ների եկեղեցին, քանի որ հէնց այդ եկեղեցուն մի պատով կպած է իրանց Զիզրաչէն եկեղեցին. ուրեմն թող իզուր տեղը հայ-կաթօլիկները ոչ վրդովեն լատինականների անհիմն լուրերից, ոչ էլ կատածն իրանց լուսաւորչական արիւնա-կիցներին վրա, և ոչ էլ անդիտակցաբար ստորա-գրեն դրանց առաջարկած թուղթը, այլ թող պատրաստվեն ուրախութեամբ ընդունելու թիֆ-լիսում հաստատվող հայ-կաթօլիկ եպիսկոպոսին: Իսկ հայ-լուսաւորչականներին մնում է ուրա-խանալ իրանց արիւնակից հայ-կաթօլիկների բաղդաւորութեան վրա:

Հայ-կաթօլիկ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նախիջևանի գաւառի ԶԱՆՈՒԿ գիւղից մեզ դը-րում են: «Նորբերումս մի հայ երիտասարդ Աւաղ անունով թողնելով քրիստոնէական կծրը մահմե-տականութիւնն ընդունեց»: Հաղորդելով այդ լու-րը, նամակագրելու աւելցանում է, որ եթէ առհա-սարակ 'ուշադրութիւն չը դարձնիլ դրա վրա, մահմետականութեան դիմելու օրինակներ այդ կողմերում շատ կը լինի, որովհետեւ թուրքերը այդ կողմերում տիրապետող ոյժ ունեն, թէ քա-նակութեամբ, թէ ազդեցութեամբ և թէ տնտե-սական ոյժով, իսկ հայերի դրութիւնը աւելի բան աննախանձելի է:

«Нов. Время» լրագրի լսելով, վրաստանի կ-դարխութեան մէջ կը կը կատարվեն շատ փոփո-խութիւններ, որոնք կը գործադրվեն նոր էկզարիս Պալադիի թիֆլիս գալուը: Վերանորոգութիւննե-րի կենթարկվեն թէ էկզարիսութեան կառա-վարչութիւնը և թէ Անդրկովկասի բոլոր հոգևոր դպրոցները: Բացի դրանից նոյն թերթի ասելով սրբազան Պալադի մտադիր է ուշադրութիւն դարձնել տեղական միաբնակարան ընկերու-թեան և հոգևորականութեան գործունէութեան վրա:

«Русская Мысль» ամսագիրը խօսելով Յ. Այ-վաղովիկու յօդուածի վրա, ասում է. «Հայ պատ-գամաւորութիւնը ջիւր կերպով և կատարեալ օ-րինաւոր պարծանքով ողջունեց իր թանգադին հայրենակցին»: Այժմ ինչ կասն նրանք, որոնք ամեն ջանք գործ էին դնում համոզելու, որ հա-յերը չը պէտք է մասնակցեն Այվաղովիկու յօդ-ւածին, ասելով որ նա հայ չէ, կամ ոչինչ չէ արել հայերի համար: Մի երաժշտ, մի նկարչի հարկաւորութիւն էլ չունեն մի առանձին բան անել իրանց ազդի համար. արդէն հոչակաւոր զեղարուեստագէտներ դառնալով նրանք պարծանք են դառնում իրանց ազդի համար:

Երեւելի դէօյօզ Աբիխ մահից յետոյ անտիպ մնացած նրա «Հետազոտութիւնները վերին կով-կասում» աշխատութիւնը մտադրութիւն կայ չու-տով հրատարակելու օրագրութիւնների նոյն ձե-ւով, ինչպէս որ հեղինակը զբեւ է իր դիտողու-թիւնները: Այդպիսով, ասում է «Новости» լրա-նը, Աբիխի բազմամեայ և անմահ աշխատու-թիւնը, որ կրում է «Geologische Forschungen in

den Kaukasischen Ländern» անունը, կաւարտ-վի: Հանգուցեալ երկրագէտի օրագրութիւններից մնացել է 28 հատ:

Մեզ խնդրում են տպել հետեալը: «Կազանի հայ ուսանողութիւնը ստացաւ Աստրախանից, պ-Ստեփան Նազարեանից 64 ռ. 25 կօպ., որ գու-մարը պ. Նազարեանից ժողովել էր ստորագրու-թեամբ յօդուած չբաւոր ուսանողներին Այժմ խնդրում ենք թոյլ տալ մեզ յայտնել ձեր լրա-գրում մեր Հնորակաւորութիւնը թէ պ. Նազա-րեանիցն և թէ միւս յարգելի նուիրատուներին»:

ԱՍՍԱՐԱՍԱՐԱՐԻՑ մեզ գրում են հետեալը: «Նոյեմբերի 1-ին այստեղ սկսեցին դիւնուրա-գրութիւնը և վերջացրին ամսիս 7-ին: Ամբողջ գաւառից 68 հոգու ընկաւ դիւնուրական ծառա-յութեան վիճակը: Այդ թիւից 4 հոգի քաղաքիցն են, իսկ 64 հոգի գիւղերից: Վերջինների մէջ 11 հոգի դուկօրօրների աղանդին պատկանողներն են: Նոյեմբերի 10-ին բոլոր նորակոչներին ու-ղարկեցին իրանց ծառայութեան տեղը»:

Մեզ գրում են որ կենսական միջոցները Ա-խալցախում հետեալ գնեցով են վաճառվում այժմ: Ալեքսանդրօպօլի ալիւրի պուղը արժէ 1 ռ. 30 կ., Ախալցախից 1 ռուբլի Մսի ֆուն-տը արժէ 5 կօպ., պանիրը 8 կօպ. ֆունտը, 5 հատ ձու 5 կօպէկ:

ՆՈՐ-ԲԱՅԱՋԷՏԻՑ մեզ գրում են: «Այս տարի մեր վաճառականների դործը շատ վատ է ընթա-նում: Վաճառականները ոչ անցեալ տարվայ (կամ աւելի լաւ է ասել անցեալ տարիների) նի-սիւս են կարողանում ստանալ գիւղացիներից, ոչ էլ նոր ապրանք վաճառել»:

Մեր թղթակիցը ՆՈՐ-ԲԱՅԱՋԷՏԻՑ գրում է մեզ հետեալը: «Ալիւրի գինը մեզ մօտ բարձրացաւ լիարը 40 կօպէկ, և այն էլ զժուար է ձարվում. հինգ վեց օր մի անգամ հաղիւ թէ մէյդանում մի քանի լիւր ալիւր են բերում և բերածն էլ իսկոյն ձեռքից ձեռք են խլում: Մի քանի վաճառականներ մտադիր են Ալեքսանդրօպօլից բերել տալ Գանձակի ցորենը և վաճառել այստեղ: Նոյնպէս բարձրա-ցան և կտատարի և սօրուկի (որից նոյնպէս ձէթ են հանում) գները: Տեղացի պ. Ա. Մալաքեանց այժմ կտատարել խալվարը առնում է 18—20 ռուբլիով, որպէս զի Բաթում ուղարկի, այն ինչ առաջ դա արժէր 15—16 ռուբլի: Իսկ կարմիր սօրուկի խալվարը արժէ այժմ 14—16 ռուբլի, վերջապէս սև սօրուկը 12 ռուբլի: Գիւղացիք առնում են սօրուկը թէ ձէթ հանելու և թէ նը-րանից իրանց անասունների համար կուսպ պատրաստելու համար»:

Շիրակ գաւառում, ինչպէս մեզ գրում են, այս տարի ոչ մի տեսակ տարափոխիկ հիւանդութիւն չը կայ: Նոյնպէս անասունների մէջ չը կան որ և է ցանք:

Շիրակ գաւառի Արդինա գիւղից մեզ գրում են: «Այս տարի հացի գինը Շիրակում դարմա-նայի կերպով բարձրացաւ: Յօրենի սօմարը 11 ռուբլուց բարձրացաւ մինչև 18 ռուբլի, գարու սօմարը՝ 4-ից մինչև 8 ռուբլի: Հացի այդ աստի-ճան թանգանալը հետեանք չէ հացի պակասու-թեան Շիրակում, —ընդհակառակն հացը բաւա-կան առատ էր այս տարի մեր գաւառում, —այլ թանգանալու պատճառն այն էր, որ դրոյց, այն է Երեւանի և Փամբակի կողմերից հացի չափից դուրս շատ առնողներ եղան, որոնք օրից օր ա-ւելացնում էին հացի գինը և հասցրին այդ առ-տիճան թանգութեան: Ալիւրի պուղը արժէ այժմ 90 կօպէկից մինչև 1 ռուբլի 5 կօպէկ: Միւս կենսական պիտոյքներից կը յիշեմ հետեալները՝ կտատարի սօմարը արժէ 12 ռուբլի, հալած իւղը (շաւը) արժէ 11 ռուբլի 50 կօպ. պուղը՝ իսկ կարագ իւղի ֆունտը 20 կօպ. արժէ»:

Երեւալթի, նոյեմբերի 17-ին, թատրոնի դնացած հասարակութիւնը ստիպված էր յետ դառնալ կար-դալով կասայի պատի վրա կախված գիրկիցիայի յայտարարութիւնը, թէ մի քանի պատճառներով այս օրվայ ներկայացումը չի կայանայ: Այդ պատ-ճառները կայանում են նրանում, որ դերասանները արդէն վաղուց է իրանց ռօճիկները չեն առա-նում. տղամարդկանց խորը յայտնել էր այդ ա-

